ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, Էլ. փոստ: alaverdimunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ՀՈՒՆՎԱՐԻ 2024թվականի N 41-Ա

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ 06-112-0087-0016 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ՓԱՍՏԱՑԻ ՃԻՇՏ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ԳՐԱՆՑԵԼՈՒ, ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՏՆԵՐԸ ԵՎ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 8-13-րդ կետերով, հիմք ընդունելով Արթուր Յուրիկի Ռաֆյանի կողմից լիազորված անձ Սամվել Թելմանի Սարգսյանի դիմումը, անձնագրի պատճենը, լիազորագիրը, սեփականության իրավունքի N 18052023-06-0025 վկայականը, «ՍԱՐԳԻՍ ԹԱՄԱՉՅԱՆ ՌՈԲԵՐՏԻ» Ա/Ձ-ի կողմից տրված կադաստրի կոմիտեում ինքնակամ կառույցի հաշվառման տեղեկանքն ու կազմված հողամասի և շինության հատակագծերը, մասնագիտական եզրակացությունը, Օձուն բնակավայրի վարչական ղեկավարի կողմից 25.12.2023թ. տրված N 6914 տեղեկանքը
որոշում եմ.

1.Հաստատել Ալավերդի համայնքի Օձուն գյուղ, 6-րդ փողոց, 2-րդ նրբանցք, 8 հասցեում գտնվող, կադաստրային քարտեզի 06-112-0087-0016 ծածկագրով բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասի 0.09256 հա մակերեսը՝ համաձայն որոշման հավելված հանդիսացող որակավորված անձի կողմից տրված հատակագծի:
2.Օրինականացնել Ալավերդի համայնքի Օձուն գյուղ, 6-րդ փողոց, 2-րդ նրբանցք, 8 հասցեում գտնվող, 06-112-0087-0016 կադաստրային ծածկագրով, Արթուր Յուրիկի Ռաֆյանին սեփականության իրավունքով պատկանող, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.09256 հա մակերեսով հողամասում, 2010թ. ինքնակամ կառուցված, կադաստրի կոմիտեում 2023CQVCSY ծածկագրով հաշվառված, 215.2 քմ արտաքին մակերեսով (172.4 քմ ներքին մակերեսով) բնակելի տները և 40.1 քմ արտաքին մակերեսով (35.2 քմ ներքին մակերեսով) օժանդակ շինությունը՝ ավտոտնակը:

3. Ինքնակամ կառուցված շինությունները չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը և վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

4.Օրինականացված բնակելի տների համար սահմանված 188085 (հարյուր ութսունութ հազար ութսունհինգ) ՀՀ դրամ և օժանդակ շինության համար սահմանված 21029 (քսանմեկ հազար քսանինը) ՀՀ դրամ արժեքներով վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:
5.Նշված իրավունքն ենթակա է պետական գրանցման:
6.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ. ՂՈՒՄԱՇՅԱՆ**

2024թ. հունվարի 04
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, Էլ. փոստ: alaverdimunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

04 ՀՈՒՆՎԱՐԻ 2024թվականի N 42-Ա

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻՂԵԿԱՎԱՐԻ՝ 04 ՀՈՒՆՎԱՐԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԹԻՎ 37-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքանակառավարման մասին » ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, «Նորմատիվ իրավական ակտերի մասի» օրենքի 1-ին հոդվածի 2-րդ կետով, 37-րդ հոդվածով՝ որոշում եմ.

1.Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի ղեկավարի՝ 04 հունվարի 2024 թվականի թիվ 37-Ա որոշումը:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ. ՂՈՒՄԱՇՅԱՆ**

2024թ. հունվարի 04
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, Էլ. փոստ: alaverdimunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 ՀՈՒՆՎԱՐԻ 2024թվականի N 43-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄՂԱՐԹ ԲՆԱԿԱՎԱՅՐԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետի , «Հանրային ծառայության մասին » ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 15-րդ կետի, 6-րդ հոդվածի 3-րդ և 5-րդ մասերի և հիմք ընդունելով Վրեժ Հովիկի Ղազարյանի դիմումը՝ **որոշում եմ .**

1. Վրեժ Հովիկի Ղազարյանին 2024 թվականի հունվարի 08 -ին նշանակել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի Մղարթ բնակավայրի վարչական ղեկավար:

2. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նրա հետ կնքել աշխատանքային պայմանագիր: Աշխատավարձը՝ համաձայն ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու կողմից հաստատված հաստիքացուցակի:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Դ. ՂՈՒՄԱՇՅԱՆ**

2024թ. հունվարի 05
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, Էլ. փոստ: alaverdimunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 հունվարի 2024 թվականի N 44-Ա

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-002-0152-0063 ԵՎ 06-002-0152-0090 ԾԱԾԿԱԳՐԵՐՈՎ, 0.0047 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԻ ՏԵՂԱԴԻՐՔԸ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶՈՒՄ ՈՒՂՂԵԼՈՒ, ՓԱՍՏԱՑԻ ՃԻՇՏ ՏԵՂԱԴԻՐՔԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 59-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 29.04.2021թ. թիվ 698-Ն որոշմամբ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թ. դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշումով և Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի ղեկավարի 2021 թվականի մայիսի 10-ի «Անշարժ գույքի հասցեավորման հայտի ձևը սահմանելու մասին» N 104-Լ հրամանով, հիմք ընդունելով Սանասար Լազիկի Ծատինյանի կողմից լիազորված անձ Արթուր Սուրենի Ծատինյանի դիմումը, լիազորագիրը, գրանցված իրավունքի N 1216565 վկայականը, «Սարգիս Թամազյան Ռոբերտի» Ա/Ձ-ի կողմից տրված հողամասի հատակագիծը և մասնագիտական եզրակացությունը՝

որոշում եմ.

1.Կատարել N 1216565 սեփականության իրավունքի վկայականով պատկանող, 06-002-0152-0063 և 06-002-0152-0090 կադաստրային ծածկագրերով, Ալավերդի քաղաք, Սանահին Սարահարթ 3/9 շենքի բակում գտնվող, Սանասար Լազիկի Ծատինյանին սեփականության իրավունքով պատկանող ավտոտնակի զբաղեցրած՝ 0.0047 հեկտար մակերեսով համայնքային հողամասի տեղադիրքի ճշտում և հաստատել փաստացի ճիշտ տեղադիրքը կադաստրային քարտեզում, համապատասխանեցնելով իրական տեղադիրքին, համաձայն որակավորված անձի կողմից տրված հատակագծի և մասնագիտական եզրակացության:

2.Նշված հողամասի սահմանային և գծային չափերի փոփոխություններ չեն կատարվել:

3.Ելնելով հասցեավորման օբյեկտի տեղակայման դիրքից և այլ հասցեավորման օբյեկտների նկատմամբ նրա տեղակայման առավելագույն համապատասխանությունից, Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի Ալավերդի քաղաք, Սանահին Սարահարթ 3/9 շենքի բակում գտնվող, բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 0.0047 հեկտար մակերեսով հողամասին և հողամասում գտնվող գույքին տրամադրել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի քաղաք Ալավերդի, Սանահին Սարահարթ թաղամաս, Օսիպյան փողոց, 15/4 փոստային հասցեն:

4.Հողամասի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հատատված հատակագծով.

5.Նշված իրավունքը ենթակա է պետական գրանցման՝ համաձայն որոշման հավելված հանդիսացող որակավորված անձի կողմից կազմված և համայնքի ղեկավարի կողմից հաստատված հատակագծի:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Դ. ՂՈՒՄԱՇՅԱՆ**

2024թ. հունվարի 05
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, Էլ. փոստ: alaverdimunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 հունվարի 2024 թվականի N 46-Ա

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-112-0081-0011 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 16) ենթակետով, 43-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 36-րդ գլխի դրույթներով, ՀՀ հողային օրենսգրքի 48.1-րդ, 57-րդ և 60-րդ հոդվածներով, 76-րդ հոդվածի 5-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001թ. N 286 որոշման կարգի 14[1] կետով և 46.2 կետի գ) ենթակետով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 18.12.2023թ. N 103-Ա որոշումը, ՀՀ Լոռու մարզպետարանի 02/02/2023թ. N 01/112,3/00725-2023 գրությունը, համայնքի սեփականության իրավունքի N 31072023-06-0034 վկայականը (գաղտնաբառ՝ PCZBBQ7ACGZD)՝

որոշում եմ.

1.Ալավերդու համայնքային սեփականություն հանդիսացող՝ համայնք Ալավերդի, գյուղ Օձուն, 6-րդ փողոց, 10/2 հասցեում գտնվող, 06-112-0081-0011 կադաստրային ծածկագրով, 0.01313 հեկտար մակերեսով հողամասը կառուցապատման իրավունքով, 10 տարի ժամկետով՝ տարեկան 1000 (հազար) դրամ արժեքով, տրամադրել «Սիմոնյան» կրթական հիմնադրամին «Թումոն տուփի մեջ» նոր կենտրոն հիմնելու նպատակով:

2.Հողամասը գտնվում է Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:

3.Անշարժ գույքի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, իսկ պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անշարժ գույքի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին պայմանագիր կնքելու պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Դ. ՂՈՒՄԱՇՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, Էլ. փոստ: alaverdimunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 հունվարի 2024 թվականի N 45-Ա

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-088-0088-0038 ԾԱԾԿԱԳՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 16) ենթակետով, 43-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 36-րդ գլխի դրույթներով, ՀՀ հողային օրենսգրքի 47-րդ հոդվածի 3-րդ կետով, 75-րդ հոդվածի 1-ին կետի 2) ենթակետով, 60-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001թ. N 286 որոշման կարգի 14-րդ կետի ա) ենթակետով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 18.12.2023թ. N 107-Ա որոշումը, ՀՀ Լոռու մարզպետարանի 02/02/2023թ. N 01/112,3/00725-2023 գրությունը, համայնքի սեփականության իրավունքի N 26072023-06-0071 վկայականը /գաղտնաբառ՝ SSYGXNNBLSIB/՝

որոշում եմ.

1.Ալավերդու համայնքային սեփականություն հանդիսացող՝ համայնք Ալավերդի, գյուղ Շնող, 3-րդ փողոց, 1/3 հասցեում գտնվող, 06-088-0088-0038 կադաստրային ծածկագրով, 0.01784 հեկտար մակերեսով հողամասն անհատույց օգտագործման իրավունքով, 10 տարի ժամկետով տրամադրել «Սիմոնյան» կրթական հիմնադրամին «Թումոն տուփի մեջ» նոր կենտրոն հիմնելու նպատակով:

2.Հողամասը չի գտնվում Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:

3.Անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, իսկ պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անշարժ գույքի անհատույց օգտագործման պայմանագիր կնքելու պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ՂՈՒՄԱՇՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, Էլ. փոստ: alaverdimunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 հունվարի 2024 թվականի N 46-Ա

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ՔԱՐՏԵԶԻ 06-112-0081-0011 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍԸ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 16) ենթակետով, 43-րդ հոդվածով, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 36-րդ գլխի դրույթներով, ՀՀ հողային օրենսգրքի 48.1-րդ, 57-րդ և 60-րդ հոդվածներով, 76-րդ հոդվածի 5-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001թ. N 286 որոշման կարգի 14[1] կետով և 46.2 կետի գ) ենթակետով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 18.12.2023թ. N 103-Ա որոշումը, ՀՀ Լոռու մարզպետարանի 02/02/2023թ. N 01/112,3/00725-2023 գրությունը, համայնքի սեփականության իրավունքի N 31072023-06-0034 վկայականը (գաղտնաբառ՝ PCZBBQ7ACGZD)՝

որոշում եմ.

1.Ալավերդու համայնքային սեփականություն հանդիսացող՝ համայնք Ալավերդի, գյուղ Օձուն, 6-րդ փողոց, 10/2 հասցեում գտնվող, 06-112-0081-0011 կադաստրային ծածկագրով, 0.01313 հեկտար մակերեսով հողամասը կառուցապատման իրավունքով, 10 տարի ժամկետով՝ տարեկան 1000 (հազար) դրամ արժեքով, տրամադրել «Սիմոնյան» կրթական հիմնադրամին «Թումոն տուփի մեջ» նոր կենտրոն հիմնելու նպատակով:

2.Հողամասը գտնվում է Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում:

3.Անշարժ գույքի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, իսկ պայմանագրից ծագող իրավունքները ենթակա են պետական գրանցման:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում անշարժ գույքի կառուցապատման իրավունքի տրամադրման մասին պայմանագիր կնքելու պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ՂՈՒՄԱՇՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, էլ. փոստ: alaverdimunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 հունվարի 2024 թվականի N 47-Ա

N 1324335 ՎԿԱՅԱԿԱՆՈՎ ԳՐԱՆՑՎԱԾ ԿՐՊԱԿԻ ՀԲԱՂԵՑՐԱԾ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ և 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության Հողային օրենսգրքի 48-րդ հոդվածի 3-րդ մասով, 63-րդ հոդվածի 2-րդ մասով, 66-րդ հոդվածի 1-ին կետի 4-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 12.04.2001թ. N 286 որոշմամբ հաստատված կարգով, հիմք ընդունելով «ԼԻԼՈՒՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից լիազորված անձ՝ Սոֆյա Սեյրանի Միքայելյանի դիմումը, վարձակալության իրավունքի N 1324335 վկայականը, 08.04.2004թ. կնքված հողամասի վարձակալության պայմանագիրը, Ալավերդի համայնքի ավագանու 18.12.2023թ. N 117-Ա որոշումը, Ալավերդի համայնքի ղեկավարի 29.09.2023թ. N 1154-Ա որոշումը՝

որոշում եմ.

1.Լուծել «ՄՀԵՐ-ԼԻԼՈՒՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը վարձակալության իրավունքով պատկանող՝ համայնք Ալավերդի, Ալավերդի քաղաքի Սանահին Սարահարթ թաղամասում գտնվող, կադաստրային քարտեզի 06-002-0150-0000 ծածկագրից առանձնացվող, բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 0.0009 հա մակերեսով հողամասի օգտագործման իրավունքի պայմանագիրը:

2.Համայնքային սեփականություն հանդիսացող, համայնք Ալավերդի, Ալավերդի քաղաքի կադաստրային քարտեզի 06-002-0150-0000 ծածկագրից առանձնացվող, կրպակով ծանրաբեռնված բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության 0.0009 հա մակերեսով հողամասը գնման նախապատվության իրավունքով, 7128 /յոթ հազար հարյուր քսանութ/ ՀՀ դրամ կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքի միջոցով, օտարել կրպակի սեփականատեր հանդիսացող՝ «ԼԻԼՈՒՍ» սահմանափակ

պատասխանատվությամբ ընկերությանը (նախկին՝ «ՄՀԵՐ-ԼԻԼՈՒՍ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն) որպես գնման նախապատվության իրավունք ունեցող անձի:

3.Օտարվող հողամասն ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի ցանկում, այդ թվում՝ ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման գոտիներում և սպասարկման համար նախատեսված տարածքներում, հնագիտական, պատմամշակութային հուշարձանների պահպանության գոտիներում, բնապահպանական արժեք ներկայացնող հողամասերում, չի հակասում քաղաքաշինական նորմերին և կանոններին, չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

4. Հողամասերի սահմանները որոշվում են համայնքի ղեկավարի կողմից հաստատված և սույն որոշման հավելվածը հանդիսացող հատակագծով:

5. Նշված իրավունքը ենթակա է պետական գրանցման:

6. Որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Դ. ՂՈՒՄԱՇՅԱՆ**

2024թ. հունվարի 05
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, Էլ. փոստ: alaverdimunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 հունվարի 2024 թվականի N 48-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՔԱՂԱՔԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ 5 ՀԱՍՑԵՈՒՄ ԱՁ ԱԼԲԵՐՏ ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետի,«Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ,12-րդ և 15-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի « ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ, ԻՍԿ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ՕԲՅԵԿՏՆԵՐՈՒՄ՝ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» Ալավերդի համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 132-Ն որոշման և հիմք ընդունելով Ալավերդի քաղաքի ԱՁ Ալբերտ Հովսեփյանի 18.12.2023թ. հայտը՝

որոշում եմ.

1. Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի Ալավերդի քաղաքի Թումանյան 5 հասցեում գտնվող ԱՁ Ալբերտ Հովսեփյանին տրամադրել ծխախոտի արտադրանքի վաճառքի համար թիվ 001 թույլտվությունը:
2. ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու որոշմամբ սահմանված կարգով ԱՁ Ալբերտ Հովսեփյանից գանձել տեղական տուրք 12000 (տասներկու հազար) ՀՀ դրամ:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Դ. ՂՈՒՄԱՇՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, Էլ. փոստ: alaverdimunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 հունվարի 2024 թվականի N 49-Ա

*ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՔԱՂԱՔԻ ԹՈՒՄԱՆՅԱՆ 20 ՀԱՍՑԵՈՒՄ « «ԿԱՏԱ» ԱՌԵՎՏՐԻ ՏՈՒՆ » ՍՊԸ-ԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ***

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետի, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ, 12-րդ և 15-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի «ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ, ԻՍԿ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ՕԲՅԵԿՏՆԵՐՈՒՄ՝ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» Ալավերդի համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 132-Ն որոշման և հիմք ընդունելով Ալավերդի քաղաքի ««ԿԱՏԱ» Առևտրի տուն» ՍՊԸ-ի տնօրեն Արթուր Խառատյանի 19.12.2023թ. հայտը՝

որոշում եմ.

1.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի Ալավերդի քաղաքի Թումանյան 20 հասցեում գտնվող ««ԿԱՏԱ» Առևտրի տուն» ՍՊԸ-ին տրամադրել ոգելից և արկոհոլային խմիչքի և ծխախոտի արտադրանքի վաճառքի համար թիվ 002 թույլտվությունը:

2.ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու որոշմամբ սահմանված կարգով ««ԿԱՏԱ» Առևտրի տուն» ՍՊԸ-ից գանձել տեղական տուրք 50000 (հիսուն հազար) ՀՀ դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ՂՈՒՄԱՇՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, էլ. փոստ: alaverdimunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 հունվարի 2024 թվականի N 50-Ա

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉՎԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՎԱԾ ՆԿՈՒՂՈՎ ԱՎՏՈՏՆԱԿԸ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԶԲԱՂԵՑՐԱԾ՝ 06-002-0061-0071 ԾԱԾԿԱԳՐՈՎ ՀՈՂԱՄԱՍՆ ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ, 43-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության 19.11.2019թ. 225-Ն օրենքով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 34-րդ, 35-րդ կետերով, Հայաստանի Հանրապետության կառավարության 04.06.2020թ. N 1023-Ն որոշումով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 18.12.2023թ N 109-Ա որոշման 11-րդ կետը, սեփականության իրավունքի N 21082023-06-0046 (գաղտնաբառ՝ Y4TDCGBJBWGZ) վկայականը, վճարման անդորրագրերը՝

որոշում եմ.

1. Համայնքային սեփականություն հանդիսացող, համայնք Ալավերդի, Ալավերդի քաղաք, Սանահին Սարահարթ թաղամաս, Շահումյան փողոց, 6/5 հասցեում գտնվող, 77.0 քմ արտաքին մակերեսով նկուղով ավտոտնակը՝ 79156 (յոթանասունինը հազար հարյուր հիսունվեց) ՀՀ դրամ արժեքով և սպասարկման ու պահպանման համար օգտագործվող 0.0053 հա մակերեսով բնակավայրերի նպատակային, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության հողամասը /ծածկագիր՝ 06-002-0061-0071/՝ 41976 (քառասունմեկ հազար ինը հարյուր յոթանասունվեց) ՀՀ դրամ կադաստրային արժեքով, ուղղակի վաճառքով, օտարել Ազատ Պողոսի Մանյանին:
2. Նշված գույքի առք ու վաճառքի պայմանագրի վավերացման և գրանցման հետ կապված վճարները կատարվում է Ազատ Պողոսի Մանյանի կողմից:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ՂՈՒՄԱՇՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, Էլ. փոստ: alaverdimunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 հունվարի 2024 թվականի N 51-Ա

ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ 06-002-0024-0003 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ ՍԵՓԱԿԱՆ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԵՐՆ ՈՒ ԿԱՏԱՐՎԱԾ ՁԵՎԱՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 18.05.2006թ. N 912-Ն որոշման 9-րդ, 10-րդ, 11-րդ, 15-րդ, 17-րդ կետերով, հիմք ընդունելով Արմեն Միշայի Մուրադյանի դիմումը, անձնագրերի պատճենները, սեփականության իրավունքի N 23102019-06-0030 վկայականը, «ՏՍ-ՌԻԵԼԹԻ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տրված կադաստրի կոմիտեում ինքնակամ կառույցի հաշվառման տեղեկանքն ու կազմված հողամասի և շինության հատակագծերը, «Թիվ 1 ԲՇՏ» ՓԲ ընկերության տնօրենի կողմից 26.12.2023թ. տրված N 0-50 տեղեկանքը՝

որոշում եմ.

1.Օրինականացնել Ալավերդի համայնքի Ալավերդի քաղաք, Երիտասարդական փողոց, 1/1 հասցեում գտնվող, 06-002-0024-0003 կադաստրային ծածկագրով, Արմեն Միշայի Մուրադյանին և Սոնյա Վոլոդյայի Գրիգորյանինընդհանուր բաժնային սեփականության իրավունքով պատկանող, արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նպատակային նշանակության,արդյունաբերական օբյեկտներիգործառնական նշանակության 0.79979 հա մակերեսով հողամասում, 2018թ. ինքնակամ կառուցված, կադաստրի կոմիտեում 2023NGZL4R ծածկագրով հաշվառված, ընդհանուր՝ 496,4 քմ արտաքին մակերեսով (420,9 քմ ներքին մակերեսով) շինությունները՝ արտադրամասը, կաթսայատունը, սան. հանգույցը, համտեսի սենյակը, պահեստը և կատարված 19 հատ պատուհանի, 8 հատ դռան, 38 հատ միջնորմների ձևափոխությունները:

2. Ինքնակամ կառուցված շինությունները չեն խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը և վտանգ չեն սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, կառուցված չեն

ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում կամ կառուցված չեն քաղաքաշինական նորմերի ու կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3.Օրինականացված շինությունների սահմանված 1 058 822 (մեկ միլիոն հիսունութ հազար ութ հարյուր քսաներկու) ՀՀ դրամ և կատարված ձևափոխությունների համար սահմանված 92430 (իննսուներկու հազար չորս հարյուր երեսուն) ՀՀ դրամ արժեքներով վճարները 60-օրյա ժամկետում չվճարելու դեպքում որոշումը համարվում է ուժը կորցրած:

4.Նշված իրավունքն ենթակա է պետական գրանցման:

5.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Դ. ՂՈՒՄԱՇՅԱՆ**

2024թ. հունվարի
ք. Ալավերդի

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնք
ՀՀ, Լոռու մարզ, ք.Ալավերդի, (0253) 2-41-00, էլ. փոստ: alaverdimunicipality@gmail.com

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

05 հունվարի 2024 թվականի N 52-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՔԱՂԱՔԻ ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ 18 / 18 ՀԱՍՑԵՈՒՄ ԱՁ ԱՄԱԼՅԱ ԾԱՏՈՒՐՅԱՆԻՆ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի առաջին մասի 2-րդ կետի,«Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ,12-րդ և 15-րդ հոդվածների, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի «ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ, ԻՍԿ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ՕԲՅԵԿՏՆԵՐՈՒՄ՝ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» Ալավերդի համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԼԱՎԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» N 132-Ն որոշման և հիմք ընդունելով Ալավերդի քաղաքի ԱՁ Ամալյա Ծատուրյանի 18.12.2023թ. հայտը՝

որոշում եմ.

1.Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ալավերդի համայնքի Ալավերդի քաղաքի Սայաթ-Նովա 18/18 հասցեում գտնվող ԱՁ Ամալյա Ծատուրյանին տրամադրել ոգելից և արկոհոլային խմիչքի և ծխախոտի արտադրանքի վաճառքի համար թիվ 003 թույլտվությունը:

2. ՀՀ Լոռու մարզի Ալավերդի համայնքի ավագանու որոշմամբ սահմանված կարգով ԱՁ Ամալյա Ծատուրյանից գանձել տեղական տուրք 20000 (քսան հազար) ՀՀ դրամ:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Դ. ՂՈՒՄԱՇՅԱՆ